ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

# ՈՐՈՇՈՒՄ

<<07>> հուլիսի 2026թ. N ՄՌ/389-Ա

ք. Արմավիր

## «ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ Մ.ՄԱՇՏՈՑԻ ԱՆՎԱՆ N1 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ԳՈՀԱՐ ԳՅՈՒԼԲԵԿՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 160-րդ և 164-րդ հոդվածներով, «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 13-րդ մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1599-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 1-ին կետը և Գոհար Գյուլբեկյանի 2026 թվականի հուլիսի 6-ի դիմումը.

**ո ր ո շ ու մ ե մ՝**

1. «Վաղարշապատի Մ.Մաշտոցի անվան N1 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Գոհար Գյուլբեկյանին տրամադրել 2025-2026 թվականների ամենամյա հերթական երկարացված արձակուրդի չօգտագործած մասը՝ 2026 թվականի հուլիսի 10-ից օգոստոսի 6-ը ներառյալ, 20 աշխատանքային օր տևողությամբ:
2. Գոհար Գյուլբեկյանի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում «Վաղարշապատի Մ.Մաշտոցի անվան N1 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունների կատարումը վերապահել «Վաղարշապատի Մ.Մաշտոցի անվան N1 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության կրթական աջակցությունների և դաստիարակչական աշխատանքների համակարգող Ռաիդա Ափոյանին:
3. «Վաղարշապատի Մ.Մաշտոցի անվան N1 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության կրթական աջակցությունների և դաստիարակչական աշխատանքների համակարգող Ռաիդա Ափոյանի

աշխատավարձի վճարումը 2026 թվականի հուլիսի 10-ից օգոստոսի 6-ը ներառյալ իրականացնել տնօրենի պաշտոնային դրույքաչափին համապատասխան:

4. Գոհար Գյուլբեկյանին աշխատանքի մեջ համարել 2026 թվականի օգոստոսի 7-ից:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

**ՄԱՐԶՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ,**

Восстановимая подпись

X

ԱՐԱՄ ԳՐԻԳՈՐՅԱՆ

**ՄԱՐԶՊԵՏԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ** Подписано: GRIGORYAN ARAM 2509720082 **Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ**